



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1821-Ա/2

«25» դեկտեմբերի, 2020 թ.

**ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ
(ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ
ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ԵՎ
ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգի» 3-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Կազմակերպել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի մրցույթ:
2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելված N 1-ի և հրավերի փաթեթը՝ համաձայն հավելված N 2-ի:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոջանին:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը կազմակերպում է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի **ՄՐՑՈՒՅԹ**:

Մրցույթին մասնակցելու հայտ ներկայացվում է առցանց (on-line) ռեժիմով՝ Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի մրցույթների հայտերի և հաշվետվությունների ընդունման համակարգով (<https://grants.scs.am>), մինչև 2021 թվականի փետրվարի 12-ը ներառյալ (հայտի ուղարկման հնարավորությունը կարգելափակվի Երևանի ժամանակով ժամը 18:00-ին):

Մրցույթի հրավերի փաթեթը զետեղված է Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի ինտերնետային կայքում՝ www.scs.am:

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչությունից՝ զանգահարելով 010-210-140 (*113) / 043-496-364 կամ 010-210-140 (*108) / 094-542-472:

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարություն

Հ Ր Ա Վ Ե Ր
ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ
ՄՐՑՈՒՅԹԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների (այսուհետ՝ Թեմա) հայտերի (այսուհետ՝ Հայտ) մրցույթը (այսուհետ՝ Մրցույթ) անցկացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ Նախարար) 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 1821-Ա/2 հրամանի:

1.2. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում գիտության բոլոր բնագավառների մասնագիտություններով (Հավելված N 2.1) գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացման համար 12 կամ 24 կամ 36 ամիս տևողությամբ դրամաշնորհներ կտրամադրի «Բնական գիտություններ», «Ճարտարագիտություն և տեխնոլոգիա», «Բժշկական գիտություններ», «Գյուղատնտեսական գիտություններ» բնագավառների 3-5, «Հասարակական գիտություններ», «Հայագիտություն ու հումանիտար գիտություններ» բնագավառների՝ 2-4 անձից բաղկացած գիտահետազոտական խմբերի (այսուհետ՝ Խումբ) նախաձեռնությամբ ներկայացված և մրցույթային կարգով ընտրված Թեմաների:

1.3. Հայտը չի քննարկվում, եթե՝

- բովանդակությամբ համընկնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող կամ ֆինանսավորված որևէ Թեմայի կամ ծրագրի հետ,
- նախագծի հեղինակի կողմից նախկինում իրականացված Թեմայի վերաբերյալ հաշվետվություն (այսուհետ՝ Հաշվետվություն) չի ներկայացվել կամ վերջինիս վերաբերյալ մասնագիտական փորձագիտական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կողմից տրվել է բացասական եզրակացություն,
- Խմբի ղեկավարի կողմից ներկայացվել է Բիալի ցանկերում (Beall's list, <https://beallslist.net/>) ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում կամ պարբերականներում հրատարակված աշխատություն,
- չի բավարարում Մրցույթի հրավերի պայմաններին,
- միաժամանակ ներկայացված է Կոմիտեի կողմից անցկացվող այլ մրցույթների:

1.4. Մտավոր սեփականության հեղինակային կամ արտոնագրային իրավունքի օբյեկտ հանդիսացող նյութեր պարունակող Հայտ և այնուհետև Հաշվետվություն ներկայացնելու դեպքում Խմբի ղեկավարը պետք է առաջնորդվի «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» և «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դրույթներով:

1.5. Թեմայի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքները գիտական ամսագրերում հրապարակելիս անհրաժեշտ է նշել Կոմիտեի կողմից ստացած աջակցության մասին.

- Հերազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ _____ ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

- Исследование выполнено при финансовой поддержке Комитета по науке РА в рамках научного проекта № _____.

- The work was supported by the Science Committee of RA, in the frames of the research project № _____.

Համապատասխան նշան բացակայության դեպքում հրապարակումը չի համարվելու Թեմայի արդյունք, հետևաբար՝ չի ընդունվելու Հաշվետվության մեջ:

1.6. Թեմայի իրականացման ընթացքում, յուրաքանչյուր 12 ամիսը լրանալուց հետո, Կոմիտե է ներկայացվում ընթացիկ (տարեկան) Հաշվետվություն, որի հիման վրա Խորհուրդը տալիս է եզրակացություն՝ Թեմայի ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության մասին:

1.7. Թեմայի իրականացման ընթացքում Կոմիտեն կարող է իրականացնել Թեմայի մշտադիտարկում և արդյունքները ներկայացնել Խորհրդին:

1.8. Մշտադիտարկման արդյունքները Խորհուրդը պետք է հաշվի առնի՝ Թեմայի ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության մասին եզրակացության տալիս:

1.9. Թեմայի ավարտից հետո Կոմիտե է ներկայացվում ամփոփիչ Հաշվետվություն, որի հիման վրա Խորհուրդը տալիս է եզրակացություն՝ Հաշվետվությունն ընդունելու մասին:

1.10. Կոմիտեն կարող է ֆինանսավորման երաշխավորված Թեմայի անոտացիան և Հաշվետվությունը հրապարակել տպագիր կամ էլեկտրոնային եղանակով:

2. Խմբի անդամներին ներկայացվող պահանջները

2.1. Խմբի ղեկավարը և կատարողները պետք է հանդիսանան Հայաստանի Հանրապետության մշտական բնակիչներ կամ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներ, ինչպես նաև Թեմայի կատարման ընթացքում բնակվեն Հայաստանի Հանրապետությունում:

2.2. Մրցույթին չեն կարող մասնակցել Կոմիտեի կողմից ֆինանսավորվող միաժամանակ երկու մրցութային (այդ թվում՝ միջազգային) Թեմաների (ծրագրերի) ղեկավարները կամ կատարողները (բացառությամբ անհատական խրախուսման մրցույթների շահառուների, «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր-2020» մրցույթի շահառու ասպիրանտների և նրանց գիտական ղեկավարների, «Գիտական խմբերի մեկնարկի աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի» և «Գիտական խմբերի կամ լաբորատորիաների ամրապնդմանն աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի» շահառուների), եթե այդ Թեմաների (ծրագրերի) ֆինանսավորումը չի ավարտվում մինչև սույն Մրցույթի արդյունքներով երաշխավորվելիք Թեմաների ֆինանսավորման սկսվելը:

2.3. Խմբի ղեկավար կարող է լինել այն անձը, ով՝

2.3.1. ծնվել է 1951 թվականի հունվարի 1-ից հետո,

2.3.2. ունի գիտական աստիճան,

2.3.3. վերջին հինգ տարիների ընթացքում, Հավելված N 2.1-ի 1-ին բաժնով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների համապատասխան մասնագիտություններով իրականացվելիք Թեմաների համար, ունի առնվազն երկու գիտական հոդված «Scimago Journal & Country Ranking (SJR)» պորտալում (<https://www.scimagojr.com/journalrank.php>) ընդգրկված ամսագրերում,

2.3.4. վերջին հինգ տարիների ընթացքում, Հավելված N 2.1-ի 2-րդ բաժնով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների համապատասխան մասնագիտություններով իրականացվելիք Թեմաների համար՝

- ունի առնվազն հինգ գիտական հոդված՝ հրատարակված Բարձրագույն որակավորման կոմիտեի ցանկերում ընդգրկված գրախոսվող ամսագրերում,

- կամ առնվազն երկու գիտական հոդված՝ հրատարակված միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («Arts&Humanities Citation Index (AHCI)», «Science Citation Index Expanded (SCIE)», «Social Sciences Citation Index (SSCI)», «Emerging Sources Citation Index (ESCI)» կամ «Scimago Journal & Country Ranking (SJR)») ընդգրկված պարբերականներում,

- կամ մեկ՝ առնվազն 5 տպագրական մամուլ ծավալով մենագրություն, կոլեկտիվ մենագրություն կամ գիտական աշխատություն՝ հրատարակված Web of Science գիտատեղեկատվական հարթակի գրքերի հղման ինդեքսի (Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում,

- կամ 2՝ առնվազն 5 տպագրական մամուլ ծավալով, գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության (այսուհետ՝ Կազմակերպություն) գիտական խորհրդի երաշխավորություն ունեցող և ISBN նշումով հրապարակում (մենագրություն): 1 մենագրությունը համարժեք է գրախոսվող ամսագրերում հրապարակված 2 հոդվածների:

2.4. Առնվազն 3 անձից բաղկացած Խմբի անդամներից մեկը կարող է լինել գիտական խորհրդատու (այսուհետ՝ Խորհրդատու)՝ գիտական աստիճան ունեցող և օտարերկրյա գիտական կազմակերպությունում Թեմային առնչվող մասնագիտությամբ գիտահետազոտական գործունեությամբ զբաղվող անձ:

2.5. Խորհրդատուի Հիրշի ինդեքսը (h-index) ըստ «Scopus» (<https://www.scopus.com/freelookup/form/author.uri>) գիտատեղեկատվական շտեմարանի տվյալների, Հավելված N 2.1-ի 1-ին բաժնով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների համապատասխան մասնագիտություններով իրականացվելիք Թեմաների համար պետք է լինի առնվազն 10, իսկ

Հավելված N 2.1-ի 2-րդ բաժնով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների համապատասխան մասնագիտություններով իրականացվելիք Թեմաների համար՝ առնվազն 3:

2.6. Թեմայի իրականացման ամբողջ ժամանակահատվածում (36 ամսվա հաշվարկով) առնվազն 15 օր Խորհրդատուն պետք է գտնվի Հայաստանի Հանրապետությունում:

2.7. Խորհրդատուն, մինչև 2021 թվականի փետրվարի 12-ը ներառյալ, իր պաշտոնական էլեկտրոնային հասցեից պետք է grants@scs.am էլեկտրոնային հասցեին ուղարկի իր կենսագրական տվյալները (Curriculum Vitae) և հաստատող նամակ (Letter of Confirmation)՝ նշելով Թեմայի իրականացման աշխատանքներին մասնակցության պատրաստակամության և Թեմայի կատարման ընթացքում իր գործառույթների շրջանակի մասին:

2.8. Խմբի ղեկավարը և կատարողները չեն կարող ընդգրկվել Մրցույթին ներկայացված մեկից ավելի Հայտերում:

2.9. Խմբի անդամներից առնվազն մեկը պետք է լինի 1986 թվականի հունվարի 1-ից հետո ծնված: Նշված տարիքային շեմը կարող է ավելանալ՝

- Հայաստանի Հանրապետության և (կամ) Արցախի Հանրապետության զինված ուժերում ծառայած լինելու դեպքում՝ հավելյալ 2 տարով,
- երեխայի խնամքի արձակուրդի դեպքում՝ յուրաքանչյուր երեխայի համար հավելյալ 1 տարով:

2.10. Խմբի կատարողը պետք է հանդիսանա առնվազն մագիստրատուրայի ուսանող կամ դիպլոմավորված մասնագետ (բակալավրի աստիճան ունեցող անձը կամ բակալավրիատի ուսանողը չի կարող ընդգրկվել Խմբում):

3. Ակնկալվող արդյունքները

3.1. Թեմայի ավարտից հետո Խմբի անդամները տվյալ Թեմայի շրջանակներում պետք է ունենան Մրցույթի հրավերի «1.5.» ենթակետով սահմանված նշումով հրապարակումներ.

3.1.1. Հավելված N 2.1-ի 1-ին բաժնով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների համապատասխան մասնագիտություններով իրականացվելիք Թեմաների համար՝ առնվազն երկու գիտական հոդված «Scimago Journal & Country Ranking (SJR)»-ում ամսագրերի դասակարգման առաջին կամ երկրորդ քառորդում (Q1, Q2 quartile) ընդգրկված ամսագրերում (<https://www.scimagojr.com/journalrank.php>),

3.1.2. Հավելված N 2.1-ի 2-րդ բաժնով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների համապատասխան մասնագիտություններով իրականացվելիք Թեմաների համար՝

- առնվազն երկու գիտական հոդված միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («Arts&Humanities Citation Index (AHCI)», «Science Citation Index Expanded (SCIE)», «Social Sciences Citation Index

(SSCI)», «Emerging Sources Citation Index (ESCI)» կամ «Scimago Journal & Country Ranking (SJR)» ընդգրկված պարբերականներում,

- կամ մեկ՝ առնվազն 5 տպագրական մամուլ ծավալով մենագրություն, կոլեկտիվ մենագրություն կամ գիտական աշխատություն՝ հրատարակված Web of Science գիտատեղեկատվական հարթակի գրքերի հղման ինդեքսի (Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում:

3.2. Մրցույթի հրավերի «3.1.» ենթակետում նշված պայմանը չկատարելը/կատարելը կանդիդատնա հետազայում Կոմիտեի հայտարարած մրցույթներին Խմբի անդամների կողմից ներկայացվելիք հայտի փորձագիտական գնահատականի վրա՝ դրանից հանելով/գումարելով տվյալ մրցույթում հայտի առավելագույն գնահատականի 5 տոկոսի չափով միավոր՝ Խմբի ղեկավարի ընդգրկված լինելու դեպքում և 1 տոկոսի չափով միավոր՝ Խմբի կատարողներից յուրաքանչյուրի դեպքում: Հանրագումարում կհանվի/կգումարվի տվյալ մրցույթում հայտի առավելագույն գնահատականի ոչ ավելի, քան՝ 5 տոկոսի չափով միավոր: Հետագա մրցույթներին Խմբի անդամների կողմից ներկայացված հայտի փորձագիտական գնահատականի նվազեցումը կչեղարկվի Թեմայի ավարտից հետո Կոմիտե ներկայացվող ամփոփիչ Հաշվետվությունն ընդունելու մասին Խորհրդի եզրակացության հիման վրա:

3.3. Թեմայի իրականացման ընթացքում Խմբի անդամները պետք է ապահովեն Թեմայի և/կամ գիտության տվյալ բնագավառի վերաբերյալ գիտահանրամատչելի նյութերի ստեղծում և տարածում (հարցազրույցներ, գիտահանրամատչելի ամսագրերում հրապարակումներ, տեսանյութերի ստեղծում և տարածում, լայն լսարանի համար քննարկումների կազմակերպում և այլն), որոնք հաշվի կառնվեն Խորհրդի կողմից ամփոփիչ Հաշվետվությունն ընդունելու մասին եզրակացություն տալիս:

4. Հայտ ներկայացնելը

4.1. Հայտը ներկայացնում է Խմբի ղեկավարը՝ Կոմիտեի հայտերի և հաշվետվությունների առցանց համակարգի (*այսուհետք՝ Համակարգ*) միջոցով (grants.scs.am)՝ մինչև 2021 թվականի փետրվարի 12-ը ներառյալ (Հայտի ուղարկման հնարավորությունը կարգելափակվի Երևանի ժամանակով ժամը 18:00-ին):

4.2. Կոմիտե են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը.

- Խմբի ղեկավարի դիմումը (Հավելված N 2.2),
- Համակարգում ձևավորված և ծածկագիր ստացած Հայտի տիտղոսաթերթը, ծախսերի նախահաշիվը (այսուհետ՝ Նախահաշիվ),

- Կազմակերպության (բուհի ֆակուլտետի) գիտական (գիտատեխնիկական) խորհրդի եզրակացությունը՝ Թեմայի օրիգինալության և արդիականության վերաբերյալ: Եթե Կազմակերպությունը չունի գիտական (գիտատեխնիկական) խորհուրդ, ապա պետք է ներկայացվի տվյալ բնագավառի ՀՀ որևէ այլ հանրային գիտական կազմակերպության գիտական խորհրդի եզրակացություն,
- Խմբի մինչև 35 տարեկան կատարողի անձնագրի պատճենը, ինչպես նաև մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմի պատճենը, իսկ ասպիրանտ կամ մագիստրանտ հանդիսանալու դեպքում՝ տեղեկանք, որտեղ նշված են մասնագիտությունը և ուսուցման տարին: Տարիքային շեմը ավելացնելու համար ներկայացնել զինվորական գրքույկի պատճենը կամ երեխայի խնամքի արձակուրդի մասին համապատասխան փաստաթղթի պատճենը:

4.3. Պահանջվող փաստաթղթերը Կոմիտե են ներկայացվում աշխատանքային օրերին ժամը 10:00-13:00 և 14:00-17:00 (Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 708 սենյակ) կամ փոստով (Երևան 0028, Օրբելի եղբայրների 22): Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը 2021 թվականի փետրվարի 19-ն է:

5. Հայտերի գիտական փորձաքննությունը

5.1. Կոմիտեում ուսումնասիրվում է Մրցույթին ներկայացված և Համակարգում ծածկագիր ստացած Հայտերի համապատասխանությունը Մրցույթի պայմաններին, ինչի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է Խորհրդի քննարկմանը:

5.2. Խորհրդի որոշմամբ հաստատվում է Մրցույթի պայմաններին բավարարող և գիտական փորձաքննության ենթակա Հայտերի ցանկը:

5.3. Գիտական փորձաքննության ժամանակ գնահատվում են Թեմայի (Հավելված N2.3) արդի վիճակը, նորույթը, իրականացման նախադրյալները, աշխատանքի ծավալի, իրականացման ժամկետների հիմնավորվածությունը, միջազգային համագործակցության նպատակահարմարությունը, գիտական արդյունքների տնօրինումը և տարածումը, միջգիտակարգային բնույթը, գիտության տվյալ մասնագիտության առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

5.4. Հայտը գիտական փորձաքննության է ենթարկվում երկու փորձագետների կողմից: Յուրաքանչյուր Հայտի համար փորձագետը լրացնում է Կոմիտեի կողմից սահմանված գիտական փորձաքննության գնահատման թերթիկը (Հավելված N 2.4):

5.5. Գիտական փորձաքննության գնահատման թերթիկի յուրաքանչյուր հարցի պատասխանը տրվում է գնահատականի միջոցով, առավելագույնը 5 միավոր՝ 0,5 միավորի ճշտությամբ:

5.6. Գիտական փորձաքննության ժամանակ փորձագետի առավելագույն գնահատականը 50 միավոր է:

5.7. Խորհրդի կողմից գնահատվում են Նախահաշվի հիմնավորվածությունը, արդիականությունը ազդեցությունը ոլորտի զարգացման վրա, Խմբի ղեկավարի, կատարողների մասնագիտական որակավորումը՝ ըստ գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշի որոշման մեթոդաբանության (Հավելված N 2.5):

5.8. Խորհրդի առավելագույն գնահատականը 30 միավոր է:

5.9. Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երկու փորձագետների գնահատականների միջին թվաբանականի և Խորհրդի գնահատականի գումարն է:

5.10. Երկու փորձագետների գնահատականները 20 և ավելի միավորներով տարբերվելու դեպքում Հայտը տրվում է երրորդ փորձագետին՝ գիտական փորձաքննության: Այդ դեպքում գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երեք փորձագետների՝ երկու իրար մոտ գնահատականների միջին թվաբանականն է: Առաջին երկու փորձագետների գնահատականների և երրորդ փորձագետի գնահատականի հավասար տարբերությունների դեպքում գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երկու առավելագույն գնահատականների միջին թվաբանականն է:

5.11. Կոմիտեի և փորձագետների կողմից Հայտի բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն այլ անձանց արգելվում է՝ համաձայն «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթների:

5.12. Գիտական փորձաքննության ավարտից հետո Կոմիտեն Հայտերի գիտական փորձաքննության վերջնական գնահատականների նվազման կարգով գիտական և գիտատեխնիկական գործունեության յուրաքանչյուր բնագավառի/մասնագիտության համար ձևավորում է վարկանիշային ցանկ ու ներկայացնում Խորհրդին՝ քննարկման:

5.13. Խորհուրդը Կոմիտեի նախագահին է ներկայացնում Հայտերի գնահատականների վերջնական վարկանիշային ցանկը:

5.14. Կոմիտեն, ելնելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման համար հատկացումների չափից, որոշում է գիտական և գիտատեխնիկական գործունեության յուրաքանչյուր բնագավառի/մասնագիտության շեմային գնահատականը, որին հավասար կամ դրանից բարձր գնահատված գիտական թեմաները երաշխավորվում են ֆինանսավորման: Նախարարը հաստատում է Թեմաների ցանկը, ղեկավարների ցուցակը և յուրաքանչյուր Թեմայի կատարման համար նախատեսվող ֆինանսավորման ծավալը:

5.15. Կոմիտեն Համակարգի (grants.scs.am) միջոցով Խմբերի ղեկավարներին է տրամադրում գիտական փորձաքննության արդյունքները, որոնք ներառում են փորձագետների եզրակացությունները (ապահովելով փորձագետի անանունությունը), Խորհրդի գնահատականը, տվյալ բնագավառի/մասնագիտության շեմային գնահատականը, Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը:

5.16. Կոմիտեն Կազմակերպության ղեկավարին տրամադրում է Կազմակերպությունից ներկայացված և ֆինանսավորման երաշխավորված Թեմաների ցանկը, ղեկավարների ցուցակը և յուրաքանչյուր Թեմայի կատարման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը:

6. Մրցույթի արդյունքների բողոքարկումը

6.1. Մրցույթի արդյունքները կարող են բողոքարկվել Մրցույթի արդյունքները Կոմիտեի պաշտոնական կայքում (www.scs.am) հրապարակելուց հետո 15 օրացուցային օրվա ընթացքում՝ Խմբի ղեկավարի գրավոր դիմումով:

6.2. Բողոքարկման դեպքում Հայտը մեկ փորձագետի կողմից ենթարկվում է կրկնակի գիտական փորձաքննության, արդյունքում ձևավորվում է Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը, որը կրկնակի գիտական փորձաքննության գնահատականի և դրան մոտ հիմնական գիտական փորձաքննության գնահատականի միջին թվաբանականն է:

6.3. Կոմիտեի նախագահը, հաշվի առնելով փորձաքննության հիմնական փուլից հետո առկա ֆինանսական հնարավորությունները, որոշում է բողոքարկման արդյունքում ձևավորված նոր շեմային գնահատականը, որը հավասար է կամ գերազանցում է տվյալ բնագավառի/մասնագիտության համար սահմանված շեմային գնահատականին:

6.4. Բողոքարկման արդյունքում Հայտը երաշխավորվում է ֆինանսավորման, եթե Հայտի վերջնական գնահատականը հավասար է կամ գերազանցում է տվյալ բնագավառի/մասնագիտության համար սահմանված նոր շեմային գնահատականին:

6.5. Եթե բողոքարկման արդյունքում տվյալ բնագավառի/մասնագիտության նոր շեմային գնահատականը հաղթահարել են ավելի մեծ թվով Հայտեր, քան հնարավոր է ֆինանսավորել, փորձագիտական հավասար գնահատականի դեպքում, Խորհուրդը կազմակերպում է այցելություն Կազմակերպություններ, տեղում ծանոթանում Թեմայի կատարման համար անհրաժեշտ պայմանների առկայությանը, որից հետո միայն Կոմիտեի նախագահին տալիս է առաջարկություն՝ Հայտը ֆինանսավորման երաշխավորված Թեմաների ցանկում ընդգրկելու վերաբերյալ:

6.6. Հայտի կրկնակի փորձաքննության փորձագիտական եզրակացությունը վերջնական է:

6.7. Բողոքարկված Հայտերի հեղինակները բողոքարկման արդյունքների վերաբերյալ տեղեկացվում են համաձայն Մրցույթի հրավերի «5.15.» ենթակետի:

7. Այլ դրույթներ

7.1. Կոմիտեի և ֆինանսավորման երաշխավորված Թեմայի ղեկավարի միջև կնքվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային թեմաների իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր:

7.2. Ֆինանսավորման երաշխավորված Թեմայի ղեկավարի և Խմբի կատարողների միջև, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով, կնքվում են պայմանագրեր, որոնց պատճենները ներկայացվում են Կոմիտե:

7.3. Ֆինանսավորման երաշխավորված Թեմայի ղեկավարի և Կազմակերպության միջև կնքվում է ծառայությունների մատուցման պայմանագիր («Այլ ծախսեր» հոդվածի «Վերադիր ծախսեր» ենթահոդվածով նախատեսված գումարի չափով), որի պատճենը ներկայացվում է Կոմիտե:

7.4. «Բնական գիտություններ», «Ճարտարագիտություն և տեխնոլոգիա», «Բժշկական գիտություններ» և «Գյուղատնտեսական գիտություններ» բնագավառներում իրականացվելիք Թեմաների 12-ամսյա ֆինանսավորման առավելագույն ծավալները նախատեսել.

7.4.1. 5; 4; 3 անձից բաղկացած Խմբերի համար համապատասխանաբար՝

- 7500,0 հազար, 6000,0 հազար և 4 500,0 հազար ՀՀ դրամ՝ փորձարարական հետազոտություններ նախատեսած թեմաների համար,

- 7000,0 հազար, 5600,0 հազար և 4200,0 հազար ՀՀ դրամ՝ տեսական հետազոտություններ նախատեսած թեմաների համար,

եթե Խմբում նախատեսված չէ Խորհրդադրու,

7.4.2. 5; 4 անձից բաղկացած Խմբերի համար համապատասխանաբար՝

- 6900,0 հազար և 5400,0 հազար ՀՀ դրամ՝ փորձարարական հետազոտություններ նախատեսած թեմաների համար,

- 6400,0 հազար և 5000,0 հազար ՀՀ դրամ՝ տեսական հետազոտություններ նախատեսած թեմաների համար,

եթե Խմբում նախատեսված է Խորհրդադրու:

7.5. «Հասարակական գիտություններ» և «Հայագիտություն և հումանիտար գիտություններ» բնագավառներում իրականացվելիք Թեմաների 12-ամսյա ֆինանսավորման առավելագույն ծավալները նախատեսել.

7.5.1. 4; 3 և 2 անձից բաղկացած Խմբերի համար համապատասխանաբար՝ 5600,0 հազար, 4200,0 հազար և 2800,0 հազար ՀՀ դրամ, *եթե Խմբում նախատեսված չէ Խորհրդադրու,*

7.5.2. 4 և 3 անձից բաղկացած Խմբերի համար համապատասխանաբար՝ 5000,0 հազար և 3600,0 հազար ՀՀ դրամ, *եթե Խմբում նախատեսված է Խորհրդադրու:*

7.6. Խորհրդատուի համար աշխատանքի վարձատրություն չի նախատեսվում:

7.7. Աշխատանքի վարձատրության համար հատկացված առավելագույն 12-ամսյա գումարը չպետք է գերազանցի.

7.7.1. 5; 4; 3 և 2 անձից բաղկացած խմբերի համար համապատասխանաբար՝ 6000,0 հազար, 4800,0 հազար, 3600,0 հազար և 2400,0 հազար ՀՀ դրամը, *եթե խմբում նախատեսված չէ հորհրդատու,*

7.7.2. 5; 4 և 3 անձից բաղկացած խմբերի համար համապատասխանաբար՝ 4800,0 հազար, 3600,0 հազար և 2400,0 հազար ՀՀ դրամը, *եթե խմբում նախատեսված է հորհրդատու:*

Աշխատանքի վարձատրության գումարը վերոնշյալ ծավալներից պակաս նախատեսելու դեպքում սարքերությունը կարող է օգտագործվել Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածում:

7.8. Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածի «Սարքեր, նյութեր և ծառայություններ» ենթահոդվածով կարող են նախատեսվել գիտական սարքավորումների, հետազոտությունների ընթացքում օգտագործվող նյութերի ձեռքբերման և/կամ ծառայությունների ծախսեր: Գիտական սարքերը և սարքավորումների ձեռք բերումը չի կարող նախատեսվել Թեմայի իրականացման վերջին տարվա համար, եթե Թեման 12-ամսյա չէ: Բոլոր ծախսերը պետք է հիմնավորել Նախահաշվի մեկնաբանության մեջ:

7.9. Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածի «Գործուղումներ» ենթահոդվածով նախատեսվող գումարը կարող է օգտագործվել ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ օտարերկրյա պետություններում գիտական միջոցառումներին մասնակցելու համար: Խմբի անդամների գործուղման նպատակը և դրա հետ կապված բոլոր ծախսերն անհրաժեշտ է հիմնավորել Նախահաշվի մեկնաբանության մեջ:

7.10. Խորհրդատուի Հայաստանի Հանրապետություն գործուղման ծախսերը հոգալու համար նախատեսել առավելագույնը 600,0 հազար ՀՀ դրամ (12-ամսյա կտրվածքով):

7.11. Գործուղումների համար օրապահիկը և գիշերավարձն անհրաժեշտ է հաշվարկել ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված ծախսերի չափերի, բայց ոչ ավելի՝ քան ամսական 1500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, իսկ օրապահիկի համար ոչ ավելի՝ քան ամսական 1000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Խմբի յուրաքանչյուր անդամի օտարերկրյա գործուղումների ընդհանուր ժամանակը չպետք է գերազանցի երկու ամիսը (12 ամսվա ընթացքում):

7.12. Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածի «Վերադիր ծախսեր» ենթահոդվածով նախատեսվում է Կազմակերպության ղեկավարի իրավասությանը թողնված գումարը, որով տնօրենը (ռեկտորը) ապահովում է Կազմակերպության (բուհի գիտական մասի) գործունեությունը և ստեղծում Թեմայի կատարման համար անհրաժեշտ պայմաններ:

7.13. «Բնական գիտություններ», «Ճարտարագիտություն և տեխնոլոգիա», «Բժշկական գիտություններ» և «Գյուղատնտեսական գիտություններ» բնագավառներում իրականացվելիք Թեմաների համար «Վերադիր ծախսերը» չպետք է գերազանցեն 100 հազար ՀՀ դրամը (12-ամսյա կտրվածքով), իսկ «Հասարակական գիտություններ» և «Հայագիտություն և հումանիտար գիտություններ» բնագավառներում իրականացվելիք Թեմաների համար՝ 55 հազար ՀՀ դրամը (12-ամսյա կտրվածքով):

7.14. Խմբի ղեկավարը կարող է դիմել Կոմիտե Խմբի կատարողի համարժեք փոփոխություն կատարելու՝ ըստ տարիքային խմբի և գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշի, կամ Խմբի կատարողների թիվը մեկով կրճատելու (եթե մինչև 35 տարեկան կատարողը չէ) միջնորդությամբ՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորում(ներ)ը: Խմբի կատարողների թվի կրճատման դեպքում Խմբի ղեկավարի և Կոմիտեի միջև կնքվում է պայմանագրի գնի փոփոխության մասին համաձայնագիր:

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԻԱՆ ԴԱՍԻՉՆԵՐՈՎ

Բաժին 1

Բաժին 2

<p>1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p> <p>1.1 Մաթեմատիկա</p> <p>1.2 Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ</p> <p>1.3 Ֆիզիկա և աստղագիտություն</p> <p>1.4 Քիմիա</p> <p>1.5 Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ</p> <p>1.6 Կենսաբանական գիտություններ</p> <p>2. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ</p> <p>2.2 Էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ</p> <p>2.3 Մեխանիկա</p> <p>2.5 Քիմիական տեխնոլոգիաներ</p> <p>2.6 Նյութագիտություն</p> <p>2.7 Բժշկական սարքաշինություն</p> <p>2.8 Էկոլոգիա</p> <p>2.9 Կենսատեխնոլոգիա</p> <p>2.10 Նանոտեխնոլոգիա</p> <p>3. ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p> <p>3.1. Ընդհանուր բժշկություն</p> <p>3.2. Կլինիկական բժշկություն</p> <p>3.3. Բժշկական կենսատեխնոլոգիա</p>	<p>4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p> <p>4.1 Անասնաբուծություն, անասնաբուժություն</p> <p>4.2 Բուսաբուծություն</p> <p>4.3 Հողագիտություն, ագրոքիմիա, բույսերի պաշտպանություն</p> <p>4.4 Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիա</p> <p>2. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ</p> <p>2.1 Քաղաքաշինություն և ճարտարապետություն</p> <p>2.4 Մեքենագիտություն և մեքենաշինություն</p> <p>5. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p> <p>5.1 Հոգեբանություն</p> <p>5.2 Տնտեսագիտություն և գործարարություն</p> <p>5.3 Մանկավարժական գիտություններ</p> <p>5.4 Սոցիոլոգիա</p> <p>5.5 Իրավունք</p> <p>5.6 Քաղաքական գիտություններ</p> <p>5.7 Սոցիալական և տնտեսական աշխարհագրություն</p> <p>5.8 Զանգվածային լրատվություն և հաղորդակցություն</p> <p>6. ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p> <p>6.1 Պատմություն, հնագիտություն</p> <p>6.2 Լեզվագիտություն, գրականագիտություն</p> <p>6.3 Փիլիսոփայություն, էթիկա</p> <p>6.4 Աստվածաբանություն, կրոնագիտություն</p> <p>6.5 Արվեստագիտություն</p>
---	--

գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի մրցույթի հրավերի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔԱՅԻ _____
(անուն հայրանուն)
_____ ից
(ազգանուն)
_____ ից
(հասցե)
_____ ից
(հեռախոս)

Դ Ի Մ ՈՒ Մ

Խնդրում եմ ընդունել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի մրցույթի մասնակցության «_____» ծածկագրով հայտը:

Հաստատում եմ, որ ծանոթացել եմ մրցույթի հրավերի պայմաններին և վերջիններիս հետ համաձայն եմ:

Դիմող՝ _____
(ստորագրություն)

(_____)
(անուն, ազգանուն)

«_____» _____ 2021 թ.

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

Ներկայացնել հայերեն և անգլերեն, յուրաքանչյուրը մինչև 12 էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը.

1. Անոտացիա

2. Խնդրի արդի վիճակի վերլուծությունը

3. Թեմայի գիտական նպատակները և խնդիրները

4. Հետազոտական ծրագիրը

5. Իրականացման գիտական մեթոդները

6. Օրացուցային պլանը (ըստ եռամսյակների)

7. Առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները

8. Միջազգային համագործակցության նախադրյալները, ինչպես նաև նպատակահարմարությունը և ակնկալվող արդյունքները

9. Տվյալ ուղղությամբ խմբի ձեռքբերումները

10. Ակնկալվող արդյունքների (այդ թվում՝ գիտահանրամարտչելի) քանակական և որակական ցուցանիշները (հրապարակումներ, գիտաժողովներ, նորարարական կարողության կիրառություն (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն))

11. Օգտագործված գրականության ցանկը

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Հարցաշարի յուրաքանչյուր հարցի պատասխանը տրվում է թվային գնահատականով, առավելագույնը 5 միավոր (0,5 միավորի ճշտությամբ)՝ հետևյալ սկզբունքով.

5	Գերազանց: Պատասխանը լիովին համապատասխանում է առաջադրված պահանջներին և թերություններն աննշան են:
4	Շատ լավ: Հարցի պատասխանն առաջադրված պահանջներին համապատասխանում է որոշակի վերապահումներով:
3	Լավ: Պատասխանն ընդհանուր առմամբ բավարարում է առաջադրված պահանջներին, թեև կան նաև զգալի թվով անհամապատասխանություններ, որոնք սակայն շտկելի են:
2	Միջին: Հարցի պատասխանը բավարար չէ դրա վերաբերյալ ամբողջական կարծիք կազմելու համար:
1	Վատ: Պատասխանը ներկայացված է մակերեսորեն և խիստ անորոշ:
0	Շատ վատ: Հարցի պատասխանը բացակայում է կամ այն չի կարող որոշվել տեղեկատվության բացակայության պատճառով:

Հարցաշար փորձագետի

1.	Արդի վիճակի վերլուծություն: Որքանո՞վ է համապարփակ վերլուծված ոլորտի արդի վիճակը:	
2.	Ծրագիր: Որքանո՞վ են հստակ ձևակերպված գիտական ծրագիրը, լուծվելիք խնդիրներն ու նպատակները:	
3.	Նորույթ: Որքանո՞վ է նոր ու հեռանկարային առաջարկվող գիտական թեման:	
4.	Մեթոդներ: Որքանո՞վ են առաջարկվող մեթոդները համապատասխանում գիտական թեմային:	
5.	Նախագծի պլանավորում: Որքանո՞վ են համապատասխանում գիտական թեմայի իրականացման փուլերը հետազոտության նպատակներին հասնելուն և որքանո՞վ են դրանք իրատեսական:	
6.	Մարդկային ներուժ: Որքանո՞վ է համապատասխանում խմբի անդամների թվաքանակն ու մասնագիտական որակավորումը թեմայի իրականացմանը:	
7.	Իրականացման նախադրյալներ: Որքանո՞վ են բավարար առկա և (կամ) ձեռք բերվելիք հնարավորությունները նախագծի իրականացման համար:	
8.	Միջազգային համագործակցություն: Որքանո՞վ է նախագծի իրականացումն ընդգրկում միջազգային համագործակցություն:	
9.	Միջգիտակարգային բնույթ: Արդյո՞ք Թեմայի իրականացման ընթացքում նախատեսվում են միջգիտակարգային հետազոտություններ:	
10.	Արդյունքների տնօրինում: Որքանո՞վ է հստակ ձևակերպված հետազոտության արդյունքների տնօրինումը (այդ թվում՝ գիտահանրամատչելի) և որքանո՞վ են ակնկալվող արդյունքները համապատասխանում ֆինանսավորման ծավալներին (արդյունքների հրապարակում (ամսագրեր, գիտաժողովներ և այլն), նորարարական կարողության կիրառություն (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն):	
Փորձագետի գնահատականը (10 գնահատականների գումարը)		

Փորձագետի մեկնաբանություններ (ծավալը չի սահմանափակվում)

<p>Նախագծի ներկայացման գնահատման մեկնաբանություն (հարցաշարի 1-5 կետեր)</p>
<p>Հետազոտության իրականացման գնահատման մեկնաբանություն (հարցաշարի 6-10 կետեր)</p>

Հարցաշար Խորհրդի

1.	Հետազոտության ղեկավարում: Ղեկավարի մասնագիտական որակավորումն ըստ գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշի (Հավելված N 2.5)	
2.	Խմբի կազմ: Խմբի անդամների մասնագիտական որակավորումն ըստ գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշի:	
3.	Երիտասարդ մասնագետի ընդգրկվածություն: Երիտասարդ մասնագետի (մինչև 35 տարեկան), մասնագիտական որակավորումն ըստ գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշի:	
4.	Արդիականություն: Որքանո՞վ է գիտական ծրագիրը համապատասխանում ոլորտի արդի վիճակին, հաշվի առնելով նաև գիտխորհրդի կարծիքը:	
5.	Նախահաշիվ: Որքանո՞վ է համապատասխանում պահանջվող ֆինանսավորման ծավալը և դրա բաշխումն ըստ հոդվածների՝ հետազոտության նպատակներին հասնելուն և որքանո՞վ է հիմնավորված նախահաշիվը:	
6.	Ազդեցություն: Որքանո՞վ ազդեցություն կունենա թեմայի հաջող կատարումը Հայաստանի Հանրապետությունում տվյալ ոլորտի զարգացման վրա:	
Խորհրդի գնահատականը (6 գնահատականների գումարը)		
<p>Մեկնաբանություն (հարցաշարի 1-6 կետեր)</p>		

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԻ
ՈՐՈՇՄԱՆ**

Գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշը (այսուհետ՝ ԳԳԱՑ՝ E) որոշվում է ըստ հետևյալ բաղադրիչների (առավելագույնը 10 հրապարակում)՝

1) Գիտական ամսագրերի հրապարակումների: Հրապարակում գիտական ամսագրում՝ հոդված (Article) կամ ակնարկ (Review)՝ Web of Knowledge, Scopus, ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն որակավորման կոմիտեի (այսուհետ՝ ԲՈԿ) ցանկերում ընդգրկված ամսագրում, ինչպես նաև այդ ցանկերում չընդգրկված, բայց գրախոսվող ու մատենագրվող ամսագրում:

Բեալի ցանկերում (Beall's list) ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում հրատարակված աշխատությունները հաշվի չեն առնվելու:

Յուրաքանչյուր հոդվածի համար՝

$$E_1 = \sum \frac{IF}{N^{1/3}}$$

որտեղ՝

IF՝ ամսագրի տվյալ տարվա ազդեցության գործակիցը (այսուհետ՝ ԱԳ)՝ ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների,

N՝ ընդհանուր համահեղինակների թվաքանակ,

0.2-ից ցածր IF-ի դեպքում նրան վերագրվում է՝

0.20՝ ԱԳ ունեցող կամ ԱԳ չունեցող, բայց միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («Science Citation Index Expanded(SCIE)», «Emerging Sources Citation Index(ESCI)» կամ «Scopus») ընդգրկված ամսագրում գիտական հրապարակման դեպքում,

0.15՝ ԱԳ չունեցող, միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («SCIE», «AHCI», «SSCI», «ESCI» կամ «Scopus») չընդգրկված, բայց ՀՀ ԲՈԿ-ի ցանկում ընդգրկված գիտական հրապարակման դեպքում,

0.075՝ ԱԳ չունեցող, միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («SCIE», «SSCI», «ESCI», «AHCI» կամ «Scopus») չընդգրկված, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի ցանկերում չընդգրկված, բայց գրախոսվող ամսագրերում գիտական հրապարակման դեպքում:

«Հայագիտություն և հումանիտար գիտություններ» բնագավառների համար՝

1.00-ից ցածր IF-ի դեպքում նրան վերագրվում է՝

1.00՝ ԱԳ ունեցող կամ ԱԳ չունեցող, բայց միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («Science Citation Index Expanded (SCIE)», «Social Sciences Citation Index (SSCI)», «Emerging Sources Citation Index (ESCI)», «Arts & Humanities Citation Index (AHCI)») ընդգրկված ամսագրերում գիտական հրապարակման դեպքում,

0.50՝ ԱԳ չունեցող, «SCIE», «SSCI», «ESCI», «AHCI» հղման համակարգերում չընդգրկված, բայց «Scimago Journal & Country Ranking (SJR)» հղման համակարգում ընդգրկված ամսագրի դեպքում,

0.15՝ ԱԳ չունեցող, «SCIE», «SSCI», «AHCI», «ESCI» կամ «Scopus» հղման համակարգերում չընդգրկված, բայց ՀՀ ԲՈԿ-ի ցանկում ընդգրկված ամսագրի, ինչպես նաև արտասահմանյան հայագիտական ամսագրերի դեպքում,

0.075՝ ԱԳ չունեցող, «SCIE», «SSCI», «AHCI», «ESCI» կամ «Scopus» հղման համակարգերում, ինչպես նաև ԲՈԿ-ի ցանկում չընդգրկված, բայց գրախոսվող ամսագրերում գիտական հրապարակման դեպքում:

2) Մենագրությունների, կոլեկտիվ մենագրությունների, գիտական հրապարակումների, նյութերի ժողովածուների հրապարակումների¹: Մենագրություն,

¹Երկրորդ կետով ներկայացված հրապարակումների դասակարգման (մենագրություն, նյութերի, հոդվածների ժողովածու) վերաբերյալ վերջնական որոշումն ընդունվում է Կոմիտեի կողմից: Չեն գնահատվում բառարանները, կատալոգները, դասագրքերը, կենսագրականները, ինչպես նաև ժողովածուների, գիտաժողովների նյութերի կամ այլ աշխատությունների խմբագրումը և/կամ կազմումը:

կոլեկտիվ մենագրություն կամ գիտական հրատարակում՝ գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության գիտական խորհրդի երաշխավորություն ունեցող, որևէ մեկ գիտական թեմայի նվիրված, գիտական հանրության համար նախատեսված, առնվազն 5 տպագրական մամուլ³ ծավալ ունեցող և «ISBN» ունեցող հրատարակում: Նյութերի ժողովածու՝ գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության գիտական խորհրդի երաշխավորություն ունեցող, մեկ կամ հարակից մի քանի գիտական թեմաների նվիրված և «ISBN» ունեցող հրատարակում: Նյութերի ժողովածուները ներառում են նաև մշակութային արժեքների և պատմական փաստաթղթերի գիտականորեն պատրաստված և/կամ գիտական նկարագրություն պարունակող հրատարակումները:

Բեալի ցանկերում (Beall's list) ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում հրատարակված աշխատությունները հաշվի չեն առնվելու:

Յուրաքանչյուր մենագրության, կոլեկտիվ մենագրության, գիտական հրատարակումների կամ հոդվածի համար՝

$$E_2 = \begin{cases} \sum B \frac{P_{SH}}{N^{1/3}} \\ \sum \frac{CA}{N^{1/3}} \end{cases}$$

որտեղ՝

B=0,30՝ Web of Science գիտափոխակապակցված հարթակի գրքերի հղման ինդեքսի (Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրատարակված մենագրություն, կոլեկտիվ մենագրություն կամ գիտական հրատարակում,

CA=0,75՝ արտերկրում հրատարակված մենագրություն, կոլեկտիվ մենագրություն կամ գիտական հրատարակում (օտար լեզվով կամ հայերեն),

CA=0,50՝ ՀՀ-ում հրատարակված մենագրություն, կոլեկտիվ մենագրություն կամ գիտական հրատարակում (օտար լեզվով կամ հայերեն), կամ (Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրատարակված գրքի գլուխ կամ հոդված ժողովածուում, կամ մշակութային արժեքների և պատմական փաստաթղթերի գիտականորեն պատրաստված հրատարակում արտասահմանում,

CA=0,30՝ մշակութային արժեքների և պատմական փաստաթղթերի գիտականորեն պատրաստված հրատարակում ՀՀ-ում,

CA=0,15՝ հոդված արտերկրում օտար լեզվով հրատարակված հոդվածների ժողովածուի մեջ,

CA=0,075՝ հոդված ՀՀ-ում հրատարակված հոդվածների ժողովածուի մեջ (օտար լեզվով կամ հայերեն),

P_{SH} ՝ ծավալ (տպագրական մամուլ)²:

3) Գիտաժողովների մասնակցության: Գնահատվում են միայն գիտաժողովի նյութերում (Proceeding) 1 էջից ավելի ծավալ ունեցող հրատարակումները՝

$$E_3 = \sum \frac{P}{N^{1/3}}$$

որտեղ՝

P=0,15՝ արտերկրում տեղի ունեցած միջազգային գիտաժողովի նյութ,

P=0,075՝ ՀՀ-ում տեղի ունեցած գիտաժողովի նյութ:

²Մեկ տպագրական մամուլը համարժեք է A4 ֆորմատի 16 էջ տեքստի: